ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 32-Ն

«15» հուլիսի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 56 հոդվածի 5-րդ, 8-րդ կետի և 67-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի նախկին պանրագործարանի հարևանությամբ առևտրի սրահներ կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003-0045-0023) 162 քառակուսի մետր հողատարածքը, որը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի դրույթներում, օտարել աճուրդային եղանակով:
2. 162 քառակուսի մետր հողատարածքը բաժանել 3 մասի 54 քառակուսի մետր (ծածկագիր 08-003-0045-0023) Հր. Շահինյան փողոց 17/1 հողատարածքի, 54 քառակուսի մետր (ծածկագիր 08-003-0045-0023) Հր. Շահինյան փողոց 17/2 հողատարածքի, 54 քառակուսի մետր (ծածկագիր 08-003-0045-0023) Հր. Շահինյան փողոց 17/3 հողատարածքի:
3. Հողատարածքի մեկնարկային գինը հաստատել հողի կադաստրային արժեքի 100 %-ի չափով (յուրաքանչյուրի համար)՝ 28512 (քսանութ հազար հինգ հարյուր տասներկու) դրամ:

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ - ԿՈՂՄ
Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ
Խ. ԲՈՒԼՈՅԱՆ – ԿՈՂՄ
Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ – ԿՈՂՄ
Բ. ՄԱԿԱՐՅԱՆ-ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
15 հուլիսի 2014 թվական